ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԿՄՀՔ-ՄԱԾՁԲ-24/54

Սպասարկման ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր

ք. Հրազդան «5» սեպտեմբերի 2024թ.

Հրազդանի համայնքապետարանը այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս համայնքի ղեկավար Ս. Միքայելյանի, որը գործում է գործող Կանոնադրության հիման վրա, մի կողմից, և Խ. Շարոյանը, այսուհետ՝ «Կատարող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1 Սույն պայմանագրով կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել սույն պայմանագրի 1.2 կետում նշված ծառայությունները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել դրա համար:

*1.2 Կատարողը պարտավորվում է կատարել Հրազդանի **համայնքապետարանի համայնքային ծառայության թափուր պաշտոնների զբաղեցման մրցույթների համակարգչային ծրագիր և ՀՈԱԿ-ների տնօրենների թափուր պաշտոնների զբաղեցման մրցույթների համակարգչային ծրագիր ուղեկցման, սպասարկման և անհրաժեշտության դեպքում լրամշակումների իրագործման աշխատանքները:***

1.3 Ծառայությունների մատուցման ժամկետն է՝ պայմանագրի կնքման օրվանից մինչև տվյալ տարվա վերջը:

1.3.1 Ծառայությունները մատուցված են համարվում Պատվիրատուի կամ նրա լիազոր ներկայացուցչի կողմից հանձնման-ընդունման արձանագրության ստորագրման պահից:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1 Կատարողը պարտավոր է՝

ա) ծառայություններ մատուցել պատշաճ որակով,

բ) պատվիրատուի պահանջով մեկ շաբաթվա ընթացքում անհատույց վերացնել հայտնաբերված բոլոր թերությունները:

գ) պայմանագրի կնքման պահից սկսած 6 ամսվա ընթացքում իրականացնել երաշխիքային սպասարկում.

դ) անձամբ կատարել ծառայությունները:

2.2. Պատվիրատուն պարտավոր է ծառայությունները վճարել սույն պայմանագրի 3-րդ կետում նշված գնին համապատասխան, ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրության ստորագրման պահից հետո: